Մայրը բամփեց դստեր գլխին, փոքրիկ թարգմանը լաց ելաւ, եւ ձգելով իր անախորժ պաշտօնը, դուրս փախաւ:

— Ես հասկացայ, քոյրս, — ասեցի Մարգարիտին:

Նա անշարժ եւ լուռ մնաց իր տեղում, սպասելով իմ վերջին խօսքին:

— Դու ուզում ես Մարօի հետ ուխտ գնալ, այդպէս չէ՞:

Նա գլուխը շարժեց հաւանական եղանակով:

— Ինչո՞ւ Հասօն չէ ուղարկում եւ քեզ:

Նա այժմ շարժեց ուսերը, որ նշանակում էր, թէ ինքն էլ չգիտէ:

— Դու ցանկանում ես, որ ես խնդրե՞մ Հասօից:

Նա գլուխ տոեց, իբր թէ շնորհակալ կը լինի:

Նոյն միջոցին ներս մտաւ Մարօն: Նրա երեսի վրայ երեւեցաւ զարմացման նման մի բան:

— Դո՞ւ այստեղ ինչ ես շինում, — հարցրուց Մարգարիտից:

Հարսը ձեռքով ցոյց աւեց ճրագը, իբր թէ ճրագն էր բերել:

— Մարգարիտն ուզում է գալ մեզ հետ, — ասացի ես Մարօին:

— Թող գայ, աւելի լաւ: Բայց Հասօն ի՞նչ կասէ:

— Ես Հասօից կը խնդրեմ:

Մարօն ուրախացաւ, եւ դառնալով դէպի Մարգարիտը, ձեռքը տարաւ դէպի նրա քօղը, բարձրացնելով ասաց.

— Ումի՞ց ես երեսդ ծածկում, Ֆարհատի՞ց, ինչո՞ւ չես խօսում, քոյրն եղբօր հետ չի՞ խօսի: Ֆարհատը ինչպէս իմ, այնպէս էլ քո եղբայրն է:

Մարգարիտը թէեւ շուտով քօղը քաշեց երեսին, բայց ես կարողացայ տեսնել նրա դէմքը. նա նմանում էր մի խամրած, դալկացած ծաղկի, որ երկար պահոել էր ծածկոցի տակ:

Մարօն կրկին ձեռքը տարաւ դէպի նրա քօղը: Մարգարիտը չկարողանալով դիմանալ նրա հանաքներին, մի բան ասաց Մարօի ականջին եւ դուրս վազեց: Մարօն սկսեց ծիծաղել:

— Ինչ ասաց նա:

— Ասաց՝ «մեղք չէ՞, որ դու ասում ես՝ Ֆարհատն իմ եղբայրն է»:

— Ինչո՞ւ է մեղք:

— Տղան եւ աղջիկը երբ մէկմէկու հետ քոյր ու եղբայր են դառնում, նրանք էլ...